

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

(Մ. Արեղյանի մահվան 30-ամյակի և ճեմարանի հիմնադրման
100-ամյակի առթիվ)

Ս. Ի. ՈՍԿԵՐՉՅԱՆ (Քաֆու)

Գևորգյան ճեմարանը բացվել է 1874 թ. սեպտեմբերին. Արեղյանը ճեմարան ընդունվել է 1876 թ. ապրիլին, 11 տարեկան հասակում: Ինը տարի (1876—1885) սովորել է ճեմարանում և փայլուն կերպով ավարտել նախ դպրոցական և ապա՝ եռամյա լսարանական բաժինը:

Արեղյանը ճեմարանում որպես ուսուցիչ և դասախոս աշխատել է 18 տարի, նախ երկու տարի (1885—1887) որպես հայոց լեզվի ուսուցիչ դպրոցական քաժնում և ապա՝ 16 տարի (1898—1914) անընդհատ որպես ուսուցիչ և դասախոս:

Ես ճեմարանում սովորել եմ 1908 թ. մինչև 1915 թ.: Իմ պատմելիքն Արեղյանի մասին վերաբերում է մեծ մասամբ այդ շրջանին: Տասնյակ տարիների հեռուներից եկած իմ հուշերն աշխատել եմ ճշտել, լրացնել և իմաստավորել ճեմարանի արխիվային ֆոնդից (ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 312), իր՝ Արեղյանի համապատասխան աշխատություններից և ձեռագրերից (Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, ֆոնդ 275) և ժամանակի պարբերականներից:

Ես եկել էի Արևմտյան Հայաստանից և ընդունվել ճեմարանի III դասարանը: Արեղյանը դասավանդում էր սկսած V դասարանից:

1908 թ. հոկտեմբերին էր. մեծ դասամիջոցին ճեմարանի պարտեզի նըստարաններից մեկի վրա երեք հոգի՝ իմ դասընկեր Գրիգոր Ներսիսյանը, վեցերորդ դասարանցի Համազասպ Ինճիկյանը և ես նստած զրուցում էինք: Այդ ժամանակ մոտակա ծառուղիով անցնում էր մի միջահասակ մարդ մոտ 45 տարեկան, կլոր ու պինդ կազմվածքով, ակնոցավոր, խոժոռադեմ, խունացած զգեստներ հագին: Տղաները հենց որ նկատեցին նրան, իսկույն ոտքի ելան և ակնածանքով բարևեցին: Ես էլ հետևեցի նրանց օրինակին: Անցնողի հեռանալուց հետո հարցրի.

— Մեր ուսուցիչների՞ց է:

— Արեղյանն է, դեռ չգիտե՞ս, — ասաց Ներսիսյանը զարմացած:

— Անունը լսած եմ, բայց իրեն չէի տեսած:

— Դեռ շատ կտեսնես, — ասաց Համազասպը:

— Հապա ո՞ւմ դասագրքով ես հիմա սովորում աշխարհաբարի քերականությունը, — հարցրեց Ներսիսյանը և ինքն էլ պատասխանեց. «Արեղյանի»:

— Գրաբարի քերականությունն էլ պիտի սովորես նրա դասագրքով, — վրա բերեց Համազասպը, — հայոց գրականությունն անցնելիս նույնպես պիտի օգտվես նրա գրքերից, հոգվածներից ու տետրերից: Արեղյանը մի հասարակ ուսուցիչ չէ. նա մեր ճեմարանի դարավոր կաղնին է. V դասարանից մինչև III լսարան համարյա բոլոր հայագիտական առարկաներն ավանդողը նա է:

Հետաքրքրությունն աճեց դեպի իմ ապագա ուսուցիչը:

Շեմարանցիք հայարտանում էին Աբեղյանով: Նրանցից ամեն մեկն անհամբեր սպասում էր այն օրվան, երբ կփոխադրվեր V դասարան և կարժանանար Աբեղյանի աշակերտը դառնալու: Ամեն մի նախկին ճեմարանցի, եթե դեթ մի քանի ամիս Աբեղյանին աշակերտել էր, հարկ եղած դեպքում, երբեմն և անտեղի, չէր մոռանում ընդգծել, որ ինքն Աբեղյանի աշակերտն է՝ և դեռ: Դրանով ուղում էր հասկացնել, որ ինքը հայերենին լավ է տիրապետում:

1910 թ. սեպտեմբեր ամիսն է: Հիմա ես էլ V դասարանցի եմ և Աբեղյանի աշակերտը: Նա մեզ ավանդում է գրաբար լեզու և հայ գրականության պատմություն: Խոսում է միապաղաղ բասով, չունի երիտասարդական ավյուն և ձկունություն: Առանց ոգևորության, հանդիստ վերլուծում է թեման: Աշխատում է, որ աշակերտները ճիշտ հասկանան գրաբար տեքստերը և ճիշտ թարգմանեն գրական հայերենով: Ինձ շատ էր դուր գալիս, երբ դասի ժամանակ դժվար բառերի կամ դարձվածքների հանդիպելիս Աբեղյանը չէր շտապում բացատրել դրանք. նորից կարդացնում էր նախադասությունը կամ հատվածը և ստիպում աշակերտներին ամբողջական հատվածի օգնությամբ գլխի ընկնել, թե տվյալ բառը կամ դարձվածքը ի՞նչ իմաստով է կիրառված տվյալ հատվածում:

Նրա գոհունակությամբ գլխով անելը կամ «լավ» ասելը հավասար էր ուրիշների «գերազանց» գնահատականին: Հազվադեպ դեպքերում միայն կարելի էր ավելին լսել Աբեղյանից: Երբ ուրիշների անհաջող փորձերից հետո մեկը ճիշտ էր վերլուծում Սեբեոսից, Խորենացուց դժվար մի կտոր, Աբեղյանը երբեմն դառնալով դեպի դասարանն ասում էր. «Այ, այսպես պետք է իմանալիք հայոց լեզուն, որ կարողանայինք լուրջ աշխատանք տանել և փակել ճեմարանի վրա խոսողների բերանները»:

Աշակերտի կուպիտ սխալները ցույց էր տալիս, բայց երբեք չէր պախարակում, չէր նվաստացնում նրա անձնավորությունը: Տղաների մեջ շունեք առավել սիրելիներ. նույնիսկ իր ամենալավ աշակերտներին կամ ուսանողներին առանձնապես մոտ չէր: Երբեմն թեմայի հետ կապված մի ծիծաղելի դեպք էր պատմում. բոլորը ծիծաղում էին, իսկ ինքը խոսում էր հանդիստ, որով ավելի էր ուժեղացնում իր պատմածի տպավորությունը:

Աբեղյանի դասերին առանձնապես լավ կարգապահություն էր: Նա ուղղակի առիթ չէր ունենում կարգի խախտման պատճառով նկատողություն անելու որեէ մեկին: Պահանջկոտ էր, բայց երբեք չէր բռնանում կամ իր իշխանությունն զգալ տալիս: Նրա հեղինակությունը բավական էր, որ նրա կամքը կատարվեր, ցուցումներն ընդունվեին:

Հաճախ շարադրություն, երբեմն էլ ստուգողական թևադրություն էր տալիս: Դա լինում էր պատրաստված թևադրություն, որի տեքստը տպված ձեռագիր էր:

Շարադրության թեմաները Աբեղյանը մեծ մասամբ վերցնում էր հայոց գրականության տվյալ տարվա դասընթացից, բայց կաշին նաև ընդհանուր բնույթ կրող թեմաներ: Նրա տված շարադրությունները վաղօրոք մտածված, մանկավարժական ժողովում քննված մի կուռ համակարգ էին կազմում, բաղկացած տարբեր տեսակներից, բայց իրար լրացնող: Նրանցից ոչ մեկը միայն

վերարտագրական բնույթ կրող փոխադրություն չէր. բոլորն էլ ավելի կամ պակաս չափով ստեղծագործական բնույթի էին:

«Հաղորդակցության ճանապարհները», — ահա առաջին շարադրությունը, որ Աբեղյանը տվեց մեզ V դասարանում: Մեզ երկար շնախապատրաստեց, միայն ասաց, որ մտածենք տարբեր տեսակի ճանապարհների և նրանց նշանակության մասին: Խորհուրդ տվեց օգտագործել համապատասխան նյութեր աշխարհագրությունից ու պատմությունից:

Ընդհանուր բնույթ կրող նրա թեմաներից հիշատակության արժանի են նաև՝ «Անտառների նշանակությունը», «Գիր և գրի նշանակությունը»:

Երբեմն էլ հանձնարարում էր որոշ երկի բովանդակությունը կամ վերլուծումը հակիրճ կերպով նամակի ձևով շարադրել: Այս աշխատանքի նպատակներից մեկը նամակ գրելու վարժեցնելն էր:

Հայոց գրականության տվյալ տարվա դասընթացի հետ կապված նրա թեմաները նույնպես կրում էին ստեղծագործական բնույթ: Ահա այդ թեմաներից մեկը՝ «Գրերի գյուտը ըստ Կորյունի»: Առաջին պահին կարող է թվալ, թե դա լոկ վերարտադրողական շարադրություն է. միայն թե Կորյունը գրել է գրաբար, աշակերտը պիտի վերապատմի նրա գրածն աշխարհաբար: Բայց Կորյունը գրել է մի ամբողջ գիրք, աշակերտը նրա գրածի բովանդակությունը պիտի պատմի տետրի մի քանի երեսում: Ուրեմն պետք է աշխատի զանազանել գրվածքը երկրորդականից և արտահայտվել լակոնիկ:

Նման աշխատանք և ընդհանրացումներ պահանջում էին նաև հետևյալ թեմաները՝ «Թագավորի և նախարարների հարաբերություններն ըստ Փավստոս Բուզանդի», «Հայոց վանքերն ըստ Ասողիկի», «Շահաբասի վերաբերմունքը դեպի հայերն ըստ Ա. Դավրիժեցու»:

Աբեղյանն ինքը պատմական և գրական երևույթները, նրանց զարգացման ընթացքը, պատճառներն ու հետևանքները, մարդկանց աշխարհայացքը, նրանց միջավայրը և այլն, ուսումնասիրում էր համեմատությունների, զուգահեռումների միջոցով. ընդգծում էր նրանց մեջ եղած ընդհանուրը և ամեն մեկի յուրահատուկը: Աշխատում էր, որ իր սաները ևս շարադրություն գրելիս կիրառեն պատմա-համեմատական մեթոդը: Ահա լուրջ համեմատություններ պահանջող նրա թեմաներից մեկը՝ «Տգետ հոգևորականությունը Ե դարում ըստ Փարպեցու Թղթի և Խորենացու Ողբի»:

Աբեղյանը երբեմն էլ օգտագործում էր աշակերտի կենսական փորձը. առաջարկում էր գրականության մեջ արտացոլված անցյալը համեմատել ներկայի հետ, աշակերտի տեսածի, դիտածի, վերապրածի հիման վրա: Այդպիսին էր նրա հետևյալ թեման՝ «Արարատյան դաշտը Ղազար Փարպեցու նկարագրությամբ և ներկայումս»:

Նրա հետաքրքիր թեմաներից էին նաև «Հայ կանայք ըստ Եղիշեի», «Թաթարների բնութագիրն ըստ Կիրակոս Գանձակեցու», «Աղասու բնութագիրն ըստ Խ. Աբովյանի», «Բանաստեղծը ըստ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» և այլն:

Շատ քիչ էր պատահում, որ Աբեղյանը գովեր առանձին շարադրություններ: Տեսրերը վերադարձնելիս շարադրությունների թերություններն ընդհանրացված ձևով էր ցույց տալիս:

Ծն նկատեցի, որ Աբեղյանը, գոնե այն տարիներին, ավելի մեծ կարևորություն էր տալիս ուղղագրությանը և քերականական ու շարահյուսական կանոնների համաձայն ճիշտ գրելուն, քան թե ոճի գեղեցկությանը կամ պատկերավորությանը, սրամիտ արտահայտություններին և այլն։ Հազվագյուտ դեպքերում էր խրախուսում աշակերտի ինքնարուխ ստեղծագործությունը։ Միայն շատ ուշ հասկացա դրա պատճառը։ Մեր ուսուցչի առաջ տարիներ շարունակ ծառացած էր սաներին լիազրագետ դարձնելու հարցը։

Ինձ համար առանձնապես հետաքրքիր էին Աբեղյանի դասախոսությունները հայոց գրականության պատմությունից, որ սկսվում էին V դասարանում և վերջանում III լսարանում։ Իրոք, ոչ միայն լսարաններում, այլև դասարաններում Աբեղյանը դասախոսություն էր կարդում։ Կարդում էր դանդաղ, հանգիստ, առանց բուռն թռիչքների և վայրէջքների, առանց ճարտասանական ձևավերի և ածականների կուտակման, առանց դժվարամարս բառերի և դարձվածքների։ Մենք աստիճանաբար վարժվում էինք նրա դասախոսությունները գրանցելու, և դա ստիպում էր մեզ ավելի ուշադիր լսել դասախոսին։

Անգամ V դասարանում նա իր թեմաները պահանջվածից ավելի խոր էր վերլուծում։ Այդ դասախոսությունների շատ գրավիչ կողմն այն էր, որ դասախոսն ու հետադուտողը հանգես էին գալիս միասնականորեն։ Այդ տարիներին իր կարգացած բոլոր դասընթացներից Աբեղյանն արդեն ուներ ուսումնասիրություններ, մասամբ տպված՝ գրքեր ու հոդվածներ, իսկ մեծ մասամբ՝ անտիպ վիճակում։ Մի քանի ուրիշ հայագետների հետ լուրջ աշխատանք էր տանում նաև ստույգ բնագրեր պատրաստելու գործում։ Հետագայում լույս տեսած նրա մեծածավալ հատորները հիմնականում ստեղծված, փորձարկված ու կոկված էին ճեմարանում, որը եղել էր ինչպես Կոմիտասի, այնպես և Աբեղյանի լաբորատորիան։ Այստեղ էր Աբեղյանը Կոմիտասի հետ և նրանից հետո հավաքել ու խմբագրել տասնյակ հազարներով ժողովրդական քառյակներ, այստեղ էր նա դեռևս 1896 թ. գրի առել «Սասմա ծուրի» որոշ պատումները ճեմարանի հնամյա ծառա մոկացի նախո բիձայից և ապա ուրիշներից։

Որ պատմաբանի, գրողի կամ ստեղծագործության մասին խոսեր, անպաշտան վերլուծելու էր տեղի ու դարաշրջանի ֆոնի վրա, համեմատելու էր նախորդների հետ, ընդգծելու էր նրանցից ստացած ժառանգությունը և հետագա գրականության վրա թողած ազդեցությունը։ Այն օրերին ձեռքի տակ չունենալով հայոց պատմության մի դիտական դասընթաց՝ հարկ եղած դեպքում իր դասախոսությունների ընթացքում հենց ինքը յուրջ զբաղվում էր պատմական խնդիրների կամ օրինաչափությունների պարզաբանմամբ։

Հերթական թեման անցնելիս միշտ քննադատորեն վերլուծում էր ուրիշ գիտնականների կարծիքները և ապա տալիս իր սեփականը։ Հաճախ դասախոսությունները տանում էր մեր օրերի տերմինով ասած՝ զարգացնող ուսուցման ուղիով։ Այդ ես ի վերջո հասկացա մի բանի տարի նրան ունկնդրելուց հետո։ Ինքը գնում էր պրոբլեմներ և ինքն էլ սկսում էր լուծել այդ պրոբլեմները։ Մրոնումներ էր անում, ծանոթացնում ունկնդիրներին իր հետազոտական մեթոդներին. ցույց էր տալիս, թե ի՞նչ ճանապարհներով է հասնում իր առաջադրած պրոբլեմային իրադարձությունների լուծմանը։ Սկզբում կամ մեջ ընդ մեջ տալիս էր նաև պատրաստի դիտելիքներ, որոնց վրա հենվելով՝ պետք էր գտնել որոշակիքը։ Ի՞նչ խոսք, նման եղանակով Աբեղյանը միշտ վառ էր պա-

հում ունկնդիրների ակտիվ մտածողությունը: Երբ նրա առաջ մղած հիմնական պրոբլեմը բարդ էր լինում, նախ դնում և լուծում էր մի քանի մասնավոր պրոբլեմներ, որով և ընդհուպ մոտենում էր հիմնական պրոբլեմի լուծմանը: Օրինակ, կարգում է մեր պատմահոր՝ Մովսես Խորենացու մասին: Նախնական մի քանի ծանոթություններ տալուց հետո առաջ է մղում մի հիմնական պրոբլեմ՝ ե՞րբ է ապրել ու գրել Խորենացին: Մեջ է բերում տարբեր գիտնականների՝ այդ հարցերին տված տարբեր պատասխանները և յուրաքանչյուրի փաստարկումները: Մեկն ապացուցում է, որ Խորենացին օգտագործել է որոշ աղբյուրներ VI դարից, և նրա գրքի հորինումն իջեցնում է մինչև VI դար: Ուրիշները նման փաստարկումներով գնում են ավելի հեռու և Խորենացուն համարում են ոմանք VII, մի քանիսն էլ՝ VIII դարի հեղինակ: Կարծիքներ էլ կան, որ երկը գրվել է IX դարում և վերագրվել V դարում ապրած մի ուրիշ հեղինակի:

Աբեղյանը նախ վարպետությամբ օգտագործում է Խորենացուն դեպի հետագա դարերն իջեցնողների փաստարկումները. Խորենացուն IX դարի հեղինակ համարողներն ապացուցում են նրան VI, VII կամ VIII դարերին վերադրելը սխալ և ընդհակառակը: Հետո անցնում Խորենացուն որպես V դարի հեղինակի կողմնակիցներին. ժամանակագրական կարգով վերլուծում է նրանց տեսակետները և փաստարկումները, որոնցով հերքվում են վերոհիշյալ բացասական կարծիքները: Սրանք ապացուցում են, որ ոչ թե Խորենացին է օգտվել վերոհիշյալ աղբյուրներից, այլ դրանց հեղինակներն են օգտվել Խորենացուց: Ի վերջո ի պաշտպանություն Խորենացու որպես V դարի հեղինակի Աբեղյանը մեջ է բերում և հիմնավորում իր փաստերը և այդ ձևով լուծում իր դրած հիմնական պրոբլեմը:

Նման պրոբլեմային շարադրանքով զանազան թեմաների կարևոր հատվածները տալը Աբեղյանի համար դարձել էր մշակված սիստեմով ամրացած մի այնպիսի խոհական ունակություն, ինչպիսին հատուկ է փորձված ուսուցիչներին, երբ նրանք լուծում են որոշ տիպի բարդ խնդիրներ:

Գիտական խստությամբ հարցերը վերլուծելը, ինչպես և ոգևորության արտաքին նշանների բացակայությունը չէին խանգարում Աբեղյանին հայրենասիրական ոգով տոգորված դասախոսությունների սիստեմ կառուցելու: «Հայկ Դյուցազնի» կամ «Արա Գեղեցիկի» առասպելների մասին լինել խոսքը, Եղիշեի, «Սասմա ծոերի», Աբովյանի կամ թե Րաֆֆու մասին, Աբեղյանը հաճախ ընդգծում էր, որ մինչև XIX դարը ներառյալ մեր լավագույն գեղարվեստական երկերի թեման եղել է հայ ժողովրդի անընկճելի ձգտումը հայրենիքի օտարների հարձակումից պաշտպանելու կամ նրանց լծից ազատելու:

Ճեմարանի ուսուցիչների և դասախոսների աշխատանքի պայմաններն ընդհանուր առմամբ ծանր էին, բայց և այնպես նրանց մեծամասնությունը դասավանդումը կապում էր գիտա-հետազոտական աշխատանքի հետ: Այստեղ կային որոշ նպաստավոր հանգամանքներ. մոտ էր Մատենադարանն իր հազարավոր ձեռագրերով, համեմատաբար հարուստ էր ճեմարանի գրադարանը, այդ գրադարանի միջոցով կարելի էր անհրաժեշտ գրքեր բերել տալ հաստատության հաշվին, կարելի էր դասարաններում և լսարաններում ստուգել գրվածքի բովանդակությունն ու ձևը և համապատասխան ուղղումներ մտցնել: Ճեմարանի ուսուցիչները որոշ հնարավորություն ունեին իրենց գի-

տական աշխատությունները էջմիածնի օրգան «Արարատում» և ուրիշ պարբերականներում կամ առանձին գրքերով տպագրելու: Հեղինակները, գոնե նրանց շնչող մեծամասնությունը, այն օրերը հոնորար չէին երազում. նրանք իրենց երջանիկ էին զգում, երբ իրենց գրածը տպվում էր և հասնում ընթերցողին: Երբեմն «Արարատի» խմբագրությունը հեղինակի հողվածը կամ հողվածները ամսագրում զետեղելուց բացի ձևակերպում էր որպես գիրք կամ գրքույկ և մի 300 կամ 500 օրինակ տալիս էր հեղինակին: Աբեղյանը, ինչպես և մեր մյուս մանկավարժները, հաճախ օգտվում էին այդ հնարավորությունից, թեև դա նյութապես քիչ էր օգնում նրանց: Այն օրերին հայ հեղինակներն իրենց գրքերն սպառում էին մեծ մասամբ բարեկամների կամ գրասերների նվիրելով:

Ես աստիճանաբար սկսեցի ծանոթանալ իմ ուսուցչի տպագրված երկերին: Երբեմն նկատում էի, որ դասախոսությունների ընթացքում Աբեղյանը շատ տեղերում բառացի կրկնում է իր գրածները: Իրոք, նա ոչ թե ընթերցում էր, այլ պատմում՝ ունենալով իր առաջ դասախոսության պլանը: Միայն մեջբերումներ անելիս դիմում էր տեքստին: Ի վերջո՝ գլխի ընկա, որ իմ ուսուցչի մտքերը տվյալ թեմայի շուրջը տարիների ընթացքում այնքան մշակվել, տրամաբանորեն կարգավորվել, հղկվել ու բյուրեղացել են, որ միշտ միևնույն արտահայտչական ձևերով են երևան գալիս:

Աբեղյանն աչքի էր ընկնում իր անմիջականությամբ. խնկարկումը, կեղծ քաղաքավարական ձևերը, որոշ փաստեր դիվանագիտորեն լուծվյալ մատենալը խորթ էին նրա համար: Ակադ. Ն. Մառին նա շատ էր հարգում. բարձր էր գնահատում նրա մատուցած ծառայությունը հայագիտության և հայ հնագիտության ասպարեզում: Բայց երբ Մառը 1910 թ. սկսած առաջ էր մղում լեզվի մասին իր նոր տեսությունը, Աբեղյանը թե՛ մասնավոր խոսակցության ժամանակ, և թե՛ իր դասախոսություններում քննադատում էր այդ տեսությունը և շարունակում էր պնդել, որ հայերենը իր ծագմամբ հնդեվրոպական լեզուներից մեկն է, նրանց մի ինքնուրույն ճյուղը:

Երբ մի անուն հանած հեղինակի գրող չէր համարում, աշակերտների առաջ անգամ չէր ծածկում իր կարծիքը. նրա հասցեին «բանաստեղծ» կամ «գրող» բառն այնպես էր արտասանում, որ լսողն իսկույն ըմբռնում էր, որ խոսքը շակերտավոր գրողի կամ բանաստեղծի մասին է:

Էջմիածնի հոգևորականներին չէր սիրում՝ բացի Գոմիտասից, Կարապետ և Դարեգին վարդապետներից և Միաբանից (Գալուստ Տեր-Մկրտչյան). որոնք իր նման կլանված էին հայ մատենագրության կամ արվեստի ուսումնասիրությամբ: Միաբանը, միշտ գրքերով ու ձեռագրերով շրջապատված մի անդամալույծ, միայն անունով էր հոգևորական:

Թեև Աբեղյանը հոգևոր դպրոցում էր դասավանդում, բայց հարկ եղած դեպքում, նույնիսկ դասարաններում, իսկ առավել ևս լսարաններում, չէր խնայում հոգևորականությանը: Գրիգոր Նարեկացին անցնելիս ընդգծում էր, որ մեր հին մեծագույն բանաստեղծը հավատացող մի եկեղեցական լինելով հանդերձ՝ աստծուն մոտենալու գլխավոր միջոցը ապաշխարությունն է՝ համարում ու ոչ մի միջնորդ հանձինս կղերի չի ընդունում մարդկանց և աստծո միջև:

Նարեկացու «Վարդավառի տաղը» վերլուծելիս Աբեղյանն ասում էր, որ բացի վերնագրից ու վերջին երկու տողից՝ այդ տաղը ոչինչ կրոնական չունի:

իր մեջ: Վարդավառ անունն էլ քրիստոնեական չէ. դա տոնն է ջրի դիցուհու՝ Աստղիկի, որին վարդեր էին ձոնում: Հին Վարդավառը դարձրել են Հիսուսի պայծառափայլության տունը, իսկ հեթանոսական շրջանից մնացած նրա անունը և հանդեսները մնացել են առաջվանը: Նարեկացին դիտեր այդ: Նա իր տաղում վարպետորեն երգում է ամառվա կանաչազարդ բնությունը, բողբոջող ու ծաղկող ծառերը, փթթող վարդն ու շուշանը: Առավել ևս հետաքրքիր է նրա՝ Մարիամ Աստվածածնին նվիրված տաղը, որտեղ նարեկացին փառաբանում է Մարիամի գեղեցկությունն այնպես, ինչպես այդ անում էին այն ժամանակվա գուսանները գեղեցիկ կանանց նկատմամբ: Ահա նարեկացու Մարիամը.

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ...
 Երկու փայլակնսձև արեգական նման...
 Բերանն երկթերթի վարդն ի շրթանցն կաթեր...
 Վարսիցն երամից զարդ ոլորս են առյալ...
 Ծոցըն լուսափայլ, կարմիր վարդով լցյալ.
 Ծղիկֆրն ծիրանի մանուշակի հոլլֆ...
 Ձայն ֆաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:

Հետո գովում է Մարիամի գեղեցիկ պատմությանը, արժաթափայլ գոտին նազելի քայլվածքը և այլն:

— Կասկած չկա, — ասում էր Աբեղյանը, — որ նարեկացին այս բոլորը վերցրել է իրական կյանքից, իր տեսածից ու զգացածից, թեև ծառայեցնում է հոգևոր նպատակի՝ Աստվածածնին փառաբանելու:

X դարի վերջին նարեկացու նկարագրած Մարիամն իր գեղեցկությամբ, դուրեկան տեսքով, կայտառությամբ, իրականությամբ հիշեցնում է XVI դարի սկզբին Ռաֆայելի նկարած Մադոննաներին: Երկու արվեստագետների էլ ստեղծագործության աղբյուրը իրական կյանքն է եղել:

Աբեղյանը դեռ այն տարիներին ապացուցում էր, որ X դարի վերջին և XI դարում, մեր հայրենիքի հարյուրամյա խաղաղության շրջանում, մեր քաղաքները շատ բազմամարդացել ու հարստացել էին, ծաղկել էին առևտուրը և արհեստները, հայկական ճարտարապետությունը ձոխացել էր աշխարհիկ մոտիվներով, զգալիորեն աշխարհականացել էր բանաստեղծությունը, աճել էր հետաքրքրությունը դեպի բնությունը, մարդը, նրա ներքին կյանքն ու կարիքները, ինչպես և դեպի գիտությունը: Եթե ասկեստիզմի պաշտպան հոգևոր հայրերը նշում էին սեր, մանկամարդ կնոջ գեղեցկություն երգող գուսաններին, սրանք էլ իրենց հերթին չէին խնայում ոչ եկեղեցին, ոչ նրա սրբերին, ոչ էլ քահանաներին կամ կեղծավոր վանականներին, որոնք սերը մեղք էին համարում:

Աբեղյանի դասախոսությունները հարուստ էին լինում փաստական տրվյալներով: Չէ որ մենք շատ նյութերի և աղբյուրների դեռևս ծանոթ չէինք:

Ես առանձնապես մեծ հետաքրքրությամբ լսում էի, երբ նա վերլուծում էր ժողովրդական խաղերը: Աբեղյանն ապացուցում էր, որ այդ խաղերը գալիս են շատ հին ժամանակներից, իհարկե, փոխվող պայմանների ազդեցության տակ որոշ փոփոխության ենթարկվելով: Կոմիտասի նման նա էլ ամեն կերպ աշխատում էր, որ իր սաները բարձր գնահատեն ու սիրեն ժողովրդա-

կան բանահյուսությունը: Բազմաթիվ քառյակների օգնությամբ ցույց էր տալիս, թե ինչպես ժողովրդական խաղերն արտացոլում են հայ գեղջուկի կյանքը, սովորություններն ու բարքերը, խոհերը, ցավն ու խնդությունը:

Աբեղյանի ժամերին հաճախ ներկա էր լինում Բյուզանդ անունով մի երիտասարդ, որն ավարտել էր Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցը և հիմա ազատ ունկնդրի իրավունքով հաճախում էր որոշ դասախոսություններ: Բյուզանդը եռանդով դրանցում էր Աբեղյանի ասածները: Նա ճեմարանում մնաց ընդամենը մի տարի, հետո դնաց Պոլիս: Մի անգամ Պոլսո «Բյուզանդիոն» օրաթերթում կարդացի Բյուզանդի ստորագրությամբ մի մեծ հոդված հայ ժողովրդական բանահյուսության մասին: Հոդվածն սկզբից մինչև վերջ արտագրված էր Աբեղյանից, մեծ մասամբ բառացի, իսկ տեղ-տեղ՝ կրճատումներով: Հոդվածը ցույց տվեցի իմ ընկերներին: Բոլորն էլ դատաւիետում էին Բյուզանդին: Մյուս օրը դասամիջոցին հոդվածը ցույց տվինք Աբեղյանին: Նա տեղնուտեղը ծանոթացավ և գլուխն այս ու այն կողմը շարժելով ասաց.

— Այս առաջին անգամը չէ, որ ինձ կողոպտում են:

— Դո՛ւնե մի տեղ Ձեր անունը հիշած լինե՞ր, — ասացի ես, — այդ էլ չի արել, պետք է նրան մի դաս տալ, Կ. Աբեղյան:

— Վատ չէր լինի, իհարկե: Թերթը մի օրով ինձ տվեք:

Մի պահ լռելուց հետո առանց թերթը վերցնելու ասաց.

— Գործ չունեմ. ես լուրջ աշխատանքով եմ զբաղված:

— Բայց այդպիսի վարմունքն անպատիժ թողնել չի կարելի:

— Տեսնում եմ, որ դուք ինձնից ավելի եք զայրացած: Պաշտպանեցե՛ք ձեր ուսուցչին, եթե կամենում եք:

Մենք այդպես էլ արինք: Ես գրեցի մի հոդված ու ընկերների հավանությանմբ մեր բոլորի անունից ուղարկեցի «Բյուզանդիոնին»: Իմ անփորձ լինելու պատճառով հոդվածի մեջ զուգընթաց մեջբերումներ էի արել միայն այն տեղերից, որտեղ Բյուզանդը կրճատ կամ վերապատումներով էր մեջ բերել Աբեղյանի ասածները, իսկ մնացածի մասին իմ խոսքերով ասել էի, թե մնացած բոլորը Բյուզանդը բառացի վերցրել է Աբեղյանից: Այնինչ՝ ավելի համոզեցուցիչ կլինե՞ր, եթե նախ ցուցադրեի բառացի վերցրած մասը: Թերթը զետեղեց հոդվածը, բայց մի քանի օր հետո հայտնվեց Բյուզանդի շատ քաղաքավարի պատասխանը, թե Աբեղյանի աշակերտները սխալվում են. ինքը՝ Բյուզանդն էլ նրանց ուսուցչի նման Վաղարշապատում անձամբ դիտել է նույն այդ ջանգլուկներն ու խաղերը, և ապա նկարագրել: Դրանով պիտի բացատրել երկու աշխատությունների մեջ եղած նմանությունը:

Մի անգամ Աբեղյանն առաջարկեց ինձ կազմել բանաստեղծ Հովհ. Հովհաննեսյանի դործածած բառերի բառարանը: Նպատակը շբացատրեց, մանրամասն ցուցումներ էլ շտվեց: «Փորձիր, — ասաց, — եթե վճռես լուրջ զբաղվել, իմաց կտաս»: Առաջարկն իմ սրտովը չէր. թվում էր միապաղաղ և շատ ժամանակ էր խլում: Ի հարգանս իմ ուսուցչի՝ մի քանի օր աշխատեցի ու կանգ առա: Շատ հետո իմացա, որ Աբեղյանը դեռևս 1891 թ. մտադրվել էր հայոց լեզվի ընդարձակ բացատրական բառարան կազմել: Նա վճռել էր մեր նոր գրականությունից հանել ու բացատրել բոլոր բառերն ու դարձվածքները և համապատասխան օրինակներ մեջ բերել զրոգներից: 1891 թ. նա ինքն անձամբ կազմել էր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի բառարանը՝ առան-

ձին-առանձին թերթիկների վրա՝ համապատասխան էջերը նշանակելով, բառերը բացատրելով և կոնտեքստը մեջ բերելով: Նման տքնաջան աշխատանք կատարել էր նաև 1907 թ. ամռանը՝ կազմելով Պոռշյանի «Կովածաղկի» բառարանը: Աշխատանքի ընթացքում համոզվել էր, որ բառարան կազմելու այդ մեթոդը ճիշտ է, բայց այդ աշխատանքը վեր է մի մարդու ուժերից: Փորձել էր, բայց չէր կարողացել հարմար աշխատակիցների գտնել այն ժամանակվա պայմաններում: Այդպես էլ դործը մնացել էր անկատար, մի բան, որ Աբեղյանի նման համառ աշխատողի և նպատակասլաց մարդու կյանքում շատ քիչ էր պատահում:

Երբ աշակերտներից կամ ուսանողներից մեկը դիմում էր Աբեղյանին, նա հարկ եղած օգնությունը չէր զլանում: Առանձնապես լսարաններում հայոց գրականության սեմինարի մասնակիցներին, ինչպես և իր առարկաներից ավարտական շարադրություն գրողներին միշտ անհրաժեշտ ցուցումներ ու խորհուրդներ էր տալիս, բայց, գոնե այն տարիներին, ինքն իր նախաձեռնությամբ սովորաբար առանձին աշակերտների կամ ուսանողների չէր առաջ քաշում և հովանավորում: Ի՞նչն էր պատճառը՝ ի՞ր, թե տղաների ծանրաբեռնված լինելը, վերջիններիս (ըստ Աբեղյանի) անբավարար պատրաստությունը, ժամանակի ծանր պայմանները, հնարավորությունների սահմանափակ լինելը,-- դժվար է ասել: Բայց Աբեղյանը միշտ աշխատում էր, որ իր սաները լավ իմանան և սիրեն մայրենի լեզուն ու գրականությունը, որոնց ուսումնասիրությանը նա նվիրել էր իր ամբողջ կյանքը:

Երբեմն տղաները վիճում էին իրար հետ. ըստ ոմանց՝ Աբեղյանի ամենաուժեղ կողմը հայ հին մատենագրության հմուտ լինելն էր: Ուրիշները նրան ամենից առաջ հայոց լեզվի և լեզվաբանության, իսկ ոմանք՝ հայ ժողովրդական բանահյուսության և ազգագրության մասնագետ էին համարում: Բրոք, ճեմարանցիք հանձինս Աբեղյանի գործ ունեին հայագիտության այդ բոլոր մասերը մանրակրկիտ ուսումնասիրած մի բաղմակողմանի և բարեխիղճ գիտնականի հետ:

Ճեմարանի մանկավարժները, զլուխ ունենալով Աբեղյանին՝ բազմիցս աշխատել են ճեմարանում բարենորոգումներ մտցնել, ուսուցչական կազմը նյութապես ապահովել և մնայուն դարձնել, լսարանական բաժինը վերածել իսկական բարձրագույն դպրոցի, ունենալ ընտրովի տեսուչ, տեսչի օգնական, դեկաններ և այլն. մշակել են համապատասխան նախագծեր, բայց վանքը նոր ծախսերից խուսափելու համար միշտ ձգձգել է դրանց իրագործումը:

1914 թ. աշնանը, երբ արձակուրդից վերադարձանք ճեմարան, իմացանք, որ Աբեղյանն ստիպված է եղել հեռանալ ճեմարանից և փոխադրվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Գեորգ Ե կաթողիկոսի հունիսի 14-ի կոնդակով ուսուցիչների մեծ մասն արձակվել էր: Այն կաթողիկոսը, որ իր ժամանակին թերազնահատելով Կոմիտասին՝ նպաստեց ճեմարանից նրա հեռանալուն, հիմա էլ հանդիստ խղճով զրկեց ճեմարանը իր մյուս հիմնաքարից՝ Մ. Աբեղյանից:

Ես և իմ ընկերները, այժմ III լսարանի ուսանողներ, շատ ցավեցինք, երբ իմացանք Աբեղյանի հեռանալը, ճիշտ այնպես, ինչպես 1910 թ. աշնանը, երբ իմացանք Կոմիտասի հեռանալու մասին:

МАНУК АБЕГЯН В ЭЧМИАДЗИНСКОЙ СЕМИНАРИИ «ГЕВОРКЯН»

(К 30-летию смерти М. Абега и к 100-летию основания Семинарии)

С. И. ВОСКЕРЧЬЯН (Баку)

(Резюме)

Академия «Геворкян», основанная в 1874 г., со временем стала одним из центров арменоведения и подготовки квалифицированных учителей армянского языка и литературы. В этом была большая заслуга известного арменоведа М. Абега. На основе личных впечатлений, архивных материалов и печатных источников в статье освещаются некоторые аспекты научной и педагогической деятельности Абега в Академии.